

Մեդիագրագիտության շաբաթ Հայաստանում
Նոյեմբերի 4-10, 2024

Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը և ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը **2024թ. նոյեմբերի 4-10-ը** հայտարարում են **Մեդիագրագիտության շաբաթ** Հայաստանում և հրավիրում են ՀՀ բոլոր դպրոցներին, մանկապարտեզներին, բուհերին, գրադարաններին, կրթական և մշակութային կենտրոններին և այլ շահագրգիռ կառույցներին՝ միանալու շաբաթվան:

Մեդիագրագիտության շաբաթը ամենամյա նախաձեռնություն է, այն հնարավորություն է կրթության ոլորտի կառույցների ու կազմակերպությունների համար՝ օգտվելով առկա կրթական ռեսուրսներից միջոցառումներ ու դասեր անցկացնել, մասնակցել առցանց և դեմառդեմ հանդիպումների, ինչպես նաև մշակել և իրականացնել կրթական նախագծեր՝ նոր չափորոշչին համապատասխան ինտեգրելով մեդիագրագիտությունը կրթության մեջ:

Մեդիագրագիտության շաբաթը միջազգային շարժում է, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավորությամբ անցկացվում է ամեն տարի աշնանը՝ նպատակ ունենալով ավելի մեծ ուշադրություն հրավիրել մեդիան հասկանալու, վերլուծելու, գրագետ և արդյունավետ օգտագործելու կարևոր խնդիրների վրա:

Հայաստանում Մեդիագրագիտության շաբաթն անցկացվում է արդեն յոթերորդ տարին, այս տարի՝ **«Մեդիագրագիտությունը արհեստական բանականության դարաշրջանում»** խորագրի ներքո:

Պանելային քննարկումներ, վարպետության դասեր, ուսուցչական մեծ ֆորում, հանդիպումներ և դասընթացներ գրադարաններում, համալսարաններում և դպրոցներում, մարզային հանդիպումներ, նոր գրքերի և ձեռնարկների շնորհանդեսներ, մարզային հանդիպում-քննարկումներ ոլորտի փորձագետների և լրագրողների հետ. միջոցառումները շատ են և բազմազան՝ նախատեսված բոլորի համար:

Արհեստական բանականությունը օրեցօր ավելի շատ է ձևավորում այսօրվա աշխարհը՝ ստեղծելով նոր հնարավորություններ, բայցև մարտահրավերներ, որոնք հասկանալու, դրանց հետ աշխատելու և նորահայտ խայծերից խուսափելու միջոցներից մեկն էլ մեդիագրագիտությունն է:



Մեդիագրագիտությունն այն ուղեցույցն է, որ կարող է օգնել մեզ հասկանալ ինֆորմացիոն հոսքերը, ճանաչել որակյալ լրագրությունը, հետևել մեր թվային վարքին ու մեդիա հիգիենային՝ օգնելով ինքներս մեզ ու ուրիշներին փաստերի վրա հիմնված դատողություններ անել, ազատորեն քննարկել խնդիրները և տեղ հասցնել մեր ասելիքը՝ առանց վիրավորանքի ու ատելության, խուսափել ծուղակներից, վտանգներից, չտրվել քարոզչությանն ու կեղծիքին:

Ինչպես միանալ մեդիագրագիտության շաբաթվան

- Հետևել ԿԳՄՄՆ և ՄՆԿ ֆեյսբուքյան էջերին,
- Սովորել՝ անցնելով «Մեդիա ուգիտություն» առցանց դասընթացը և նոր «5 մատի պես ճանաչել մեդիան» դասընթացը,
- Ուսումնասիրել ՄՆԿ հրատարակած և ԿԳՄՄՆ կողմից երաշխավորված «Մեդիա ուգիտություն» ուսուցչի ձեռնարկը, դրա հիման վրա իրականացնել ուսումնական նախագծեր,
- Ուսումնասիրել ՄՆԿ հրատարակած «5 մատի պես ճանաչել մեդիան» ձեռնարկը, իրականացնել դասընթացներ՝ առաջարկված թեմաներով՝ օգտագործելով ընդգրկված գործիքակազմը
- Ծանոթանալ մեդիագրագիտության այլ ռեսուրսների Media.am կայքում, դրանց օգնությամբ անցկացնել դասեր, քննարկումներ, միջոցառումներ,
- Սովորողների հետ հանդիպման հրավիրել վստահելի լրագրողի կամ կազմակերպել այց որևէ լրատվամիջոց,
- Լսել Էնցիկլոմեդիա փոդքասթների շարքը՝ մեդիագրագիտության մասին
- Խաղալ մեդիագրագիտության համակարգչային և սեղանի խաղեր,



- Ուսուցիչների համար. մասնակցել առցանց կամ անցանց հանդիպումներին, հանդես գալ հոդվածներով մեդիայի և մեդիագրագիտության թեմաներով, կիսվել փորձով և իրականացրած նախագծերով:

- Ստեղծել և սոցիալական մեդիայում տարածել կրթական ու տեղեկատվական նյութեր, մեդիագրագիտության ուղերձներ ու կանոններ **#եսմեդիագրագետեմ, #մեդիագրագիտությանշաբաթ2024** հեշթեգերով:

Մեդիագրագիտության շաբաթվա հետ կապված հարցերի դեպքում գրել Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի մեդիագրագիտության ծրագրերի համակարգող Անի Եղիազարյանին՝ ayeghiazaryan@mediainitiatives.am էլ փոստի հասցեով կամ զանգահարել 095583616 հեռախոսահամարով:

Մեդիագրագիտության շաբաթն անցկացվում է «Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագրի շրջանակում: Այն Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ի հետ համատեղ:

Մեդիագրագիտության շաբաթը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի առատաձեռն աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջոցով: